ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ


«     » ________ 2019թ.

N: ____________________

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


# ՈՒՂԵՐՁ

## ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ կանայք, ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Գարնան այս գեղեցիկ տոնը խորհրդանշում է կյանքի հավերժությունն ու անսահման գեղեցկությունը: Այս տոնը լավ առիթ է մեկ անգամ ևս լավագույն մաղթանքներ, երախտագիտության և գնահատանքի խոսքեր ուղղելու Ձեզ՝ հոգատարության, համբերության և ազգանվեր առաքելության համար:

Սիրելի՛ կանայք, Ձեր գոյությամբ շարունակեք գեղեցկացնել կյանքն ու երկիր մոլորակը: Թո՛ղ բոլորիդ սրտերում, ընտանիքներում և ամենուր մշտապես խաղաղություն թևածի: Թո՛ղ իրականանան ձեր բոլոր նվիրական իղձերն ու երազանքները:

Ձեզ անսահման սեր, երջանկություն, ընտանեկան ջերմություն և գարնանային բարձր տրամադրություն:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ